Արձանագրություն

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի շրջանակում բաց քննարկման

26.03.2024թ.

Ներքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0025, Նալբանդյան 130, ժամը՝ 17:00

2024 թվականի մարտի 26-ին տեղի ունեցավ բաց քննարկում՝ Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի վերաբերյալ պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի շրջանակում՝ հնարավոր թեկնածուների կամ թեկնածուների Որակավորման հայտերի պատրաստման ու ներկայացման հետ կապված հարցերը քննարկելու և պարզաբանելու նպատակով: Նիստին մասնակցելու հայտ էին ներկայացրել 10 ընկերություններ՝

1. IDEMIA
2. VFS Global
3. Muhlbauer ID Services GmbH
4. AUGENTIC GmbH
5. Zetes S.A.
6. IN GROUPE
7. Thales
8. Space Hellas
9. Hexagon
10. Cross Group
11. VERIDOS
12. SUPCON Technology Co. Ltd.

Մասնակից ընկերություններից 9-ը հանդիպմանը միացան առցանց, 2-ը (SUPCON Technology Co. Ltd և VFS Global-ը)՝ անցանց ռեժիմով, 1-ը՝ Cross Group-ը, չմասնակցեց նիստին:

Գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները ներկա էին բաց քննարկմանը, որի ընթացքում առաջադրված հարցերի վերաբերյալ հնչեցին պարզաբանումներ: Առաջադրված հարցերը և դրանց պատասխանները սահմանված ժամկետում ենթակա են հրապարակման Էկոնոմիկայի նախարարության կայքէջում:

Գնահատող հանձնաժողովի կազմ

Արփինե Սարգսյան	ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Արմեն Ղազարյան	ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետ
Լիանա Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական
Արշակ Քերոբյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ
Արթուր Պետրոսյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության վիզաների բաժնի պետ
Անդրանիկ Նանագուլյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից
Վաղինակ Բաղեյան	ՀՀ ազգային անտանգության ծառայության աշխատակից
Ներսես Երիցյան	«Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Լեոնիդ Ավետիսյան	«ԷԿԵՆԳ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Սիրան Եգանյան	ՀՀ կենտրոնական բանկի գնումների համակարգման ծառայության ղեկավար (համաձայնությամբ)

Նելլի Դավթյան	ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ (հանձնաժողովի քարտուղար)